## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

**1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

2021 թվականի մարտի 1-ից ուժի մեջ է մտել Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը» (այսուհետ՝ ՀԸԳՀ), որի 1-ին հոդվածի (g) նպատակի, 41-րդ, 44-րդ, 50-րդ, 56-րդ, 65-րդ, 83-րդ, 90-րդ, 361-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել իր օրենսդրությունը մոտարկել Եվրոպական միության օրենսդրությանը[1], այն է՝ համապատասխանեցնել և ներդաշնակեցնել իր օրենսդրությունը ՀԸԳՀ-ի շրջանակներում նախատեսված Եվրոպական միության օրենսդրությանը:

Նշված պարտավորության իրականացման շրջանակներում օրենսդրության մոտարկման գործընթացը ենթադրում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակում՝ ըստ անհրաժեշտության դրանք համապատասխանեցնելով ՀԸԳՀ-ի շրջանակներում նախատեսված մոտարկման ենթակա ԵՄ օրենսդրությանը: Այլ կերպ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորություն է ստանձնել ապահովել ներպետական օրենսդրության աստիճանական մոտարկումը ԵՄ իրավական ակտերին: Ընդ որում, կարևոր է դա իրականացնել այնպես, որ այն դրական ազդեցություն ունենա երկրի զարգացման վրա. տնտեսական տեսանկյունից լինի ավելի քիչ ծախսատար և այդ դրական ազդեցությունը տեսանելի լինի ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածների համար:

[1] Տե՛ս, Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր»:

Վերոշարադրյալի համատեքստում ուսումնասիրվել են օտարերկրյա պետությունների փորձը, ինչպես նաև Եվրոպական միության օրենսդրության մոտարկման պրակտիկ ուղեցույցները:

***Մոլդովայի Հանրապետության*** «Նորմատիվ ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածով սահմանվում է, որ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը ենթարկվում են փորձաքննության Եվրոպական միության օրենսդրությանը համապատասխանելու տեսանկյունից՝ Օրենսդրության ներդաշնակեցման կենտրոնի կողմից: Եվ ստանալով համապատասխանության վերաբերյալ հայտարարությունը՝ նախագծի հեղինակը բացատրական նշումը լրացնում է համապատասխանության վերաբերյալ փորձաքննության եզրակացություններով և, անհրաժեշտության դեպքում, ամփոփագրում ներառում է օրենսդրության ներդաշնակեցման կենտրոնի դիտողություններն ու առաջարկությունները:[2]

***Վրաստանի Հանրապետության*** «Նորմատիվ ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածով սահմանվում է, որ օրենքի նախագծին, ինչպես նաև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի նախագծին կցվում է բացատրական նշում, որում, ի թիվս այլնի, նշվում է Եվրոպական միության այն իրավական ակտը, որին մոտարկելու պարտավորությունը բխում է Վրաստանի Հանրապետության և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից, ինչպես նաև կցվում է այդ իրավական ակտին համապատասխանության վերաբերյալ աղյուսակ:[3] ԵՄ օրենսդրությանը մոտարկման, ներդաշնակեցման տեսանկյունից նորմատիվ իրավական ակտի նախագծի փորձաքննությունը իրականացնում է Վրաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ԵՄ իրավունքի ստորաբաժանումը:[4]

---

[2]Տե՛ս ЗАКОН № 100 от 22-12-2017о нормативных актах, Статья 36. https://www.legis.md/cautare/getResults?doc_id=105607&lang=ru

[3] Տե՛ս organic law of Georgia on normative acts Constitutional Law of Georgia No 1324 of 13 October 2017 –website, 19.10.2017, Article 17, 1. c.d, 2.f, 5. a.b. a[1],https://matsne.gov.ge/en/document/view/90052?publication=34 (16.09.2022թ.-ի դրությամբ)

[4] Տե՛ս https://justice.gov.ge/?m=articles&id=IH6NLVInPt (16.09.2022թ.-ի դրությամբ)

***Ուկրաինայի Հանրապետությունում*** ևս առկա են համանման կարգավորումներ, մասնավորապես ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնք ուղղված են Ուկրաինայի օրենսդրությունը Եվրոպական միության օրենսդրությանը համապատասխանեցնելուն:[5]

Նշված իրավական հիմքերից է Ուկրաինայի 2004 թվականի օրենքը՝ «Ուկրաինայի օրենսդրությունը Եվրամիության օրենսդրությանը համապատասխանեցնելու ծրագրի մասին», որով հստակ նշվում է, թե կոնկրետ ոլորտներում ինչպես է իրականացվելու համապատասխանեցումը :[6]

Բացի վերոնշյալից, հարկ է նշել, որ ԵՄ փորձագետների հետ կազմակերպված բազմաթիվ քննարկումների արդյունքում և ԵՄ-ի կողմից մշակված և Արդարադատության նախարարությանը տրամադրված ***ԵՄ օրենսդրության մոտարկման գործընթացի կազմակերպման վերաբերյալ ուղեցույցներով***[7] նախատեսվում են ներդաշնակեցման հետևյալ մակարդակները՝ ներպետական օրենսդրության մոտարկում ԵՄ օրենսդրությանը, ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում, ռազմավարական բարեփոխումների իրականացում:

Նախատեսվում է, թե՛ մոտարկման, թե՛ մոտարկված նախագծերի ստուգման հստակ կառուցակարգեր, որոնց պարտադիր դրույթներից մեկն այն է, որ մշակված (մոտարկված) ցանկացած նորմատիվ իրավական ակտի նախագիծ պետք է ուղեկցվի բացատրական նշումով, որի նպատակն է ստուգումն իրականացնող մարմնին իրազեկել գոյություն ունեցող ԵՄ այն օրենսդրության վերաբերյալ, որին պետք է համապատասխանեցվի ներպետական օրենսդրությունը: Այս կապակցությամբ որպես ընդունված մոտեցում նշվում է, որ բացատրական նշումը պետք է լինի պարզ, հստակ և ընթեռնելի, որը ներառում է.

---

[5] Տե՛ս http://dspace.univd.edu.ua/xmlui/bitstream/handle/123456789/9633/Approksimatsiya%20administrativno_pravovyih%20norm_%20reguliruyuschih%20ohranu%20okruzhayuschey%20sredyi%20v%20Ukraine_%20k%20evropeyskim%20normam_%20Kazanchuk_2013.pdf?sequence=1&isAllowed=y

[6] Տե՛ս https://zakon.rada.gov.ua/laws/show/1629%D0%B0-15#Text

[7] Practical Guidelines on EU legal approximation, Methodology for MoJ as Central Coordinator of the EU approximation process Identification of shortcomings and suggestions of remedies, Memo MoJ on CEPA implementation.

1. նորմատիվ իրավական ակտի նախագծի մշակման նպատակը,

2. կանոնակարգի, դիրեկտիվի, որոշման՝ մոտարկման ենթակա հոդվածը, մասը, պարագրաֆը հավելվածը՝ նշելով մոտարկման աստիճանը,

3. մասնակի մոտարկման դեպքում նույնպես պետք է նշվեն մոտարկման ենթակա կանոնակարգը, դիրեկտիվը, որոշումը, ինչպես նաև մասնակի մոտարկման պատճառները: Պետք է նշվի նաև վերջնաժամկետը, որի ընթացքում պետք է կատարվի ամբողջական մոտարկում,

4. մոտարկման անհրաժեշտության բացակայության վերաբերյալ նշում, որը պետք է մանրամասն պարզաբանվի,

5. նախագիծը մշակող մարմնի անվանումը, կոնտակտային տվյալները:

Այդ ուղեցույցներով նախատեսվում է նաև մոտարկման ստուգման ինստիտուտը, որի իրականացման համար հիմք են ընդունվում համատեղելիության (ներպետական օրենսդրությունը չի հակասում ԵՄ օրենսդրությանը), համապատասխանության (ներպետական օրենսդրությունը փոփոխությունների միջոցով հնարավորինս համապատասխանեցվում է ԵՄ օրենսդրությանը) և մոտարկման (երկու օրենսդրությունները ներդաշնակեցված են) չափանիշները: Նշված ինստիտուտի շրջանակներում համակարգող կամ լիազոր մարմնի կողմից տրվում է պաշտոնական փաստաթուղթ, որում նշվում է, թե արդյոք մշակված իրավական ակտը համապատասխանում է ԵՄ օրենսդրությանը, թե՝ ոչ: Ընդ որում, վերոնշյալ փաստաթղթերով առաջարկվող լուծումներում, եթե նորմատիվ իրավական ակտի նախագիծը պատշաճ կերպով համապատասխանում է ԵՄ օրենսդրությանը, ապա տրամադրվում է «դրական» եզրակացություն, իսկ եթե նորմատիվ իրավական ակտի նախագիծը չի համապատասխանում ԵՄ օրենսդրությանը, ԵՄ օրենսդրությանը համապատասխանության մասին եզրակացությունը «բացասական» է տրվում:

Այսպիսով, ամփոփելով և՛ վերոնշյալ երկրների փորձը, և՛ մատնանշված ուղեցույցները, հարկ է նշել, որ հիմնական կիրառելի մոտեցման համաձայն նախատեսվում է որևէ մարմին՝ օժտված համապատասխան իրավասություններով, օրինակ, Արդարադատության

նախարարությունը: Վերջինս՝ որպես կենտրոնական մարմին, մոտարկման ստուգում իրականացնելիս ստուգում է իրավասու մարմնի կողմից մշակված նախագծի համապատասխանությունը ԵՄ այն իրավական ակտերին, որոնց հղում է տրվել բացատրական նշման մեջ: Նման մոտեցումը, ըստ էության, պայմանավորված է այն հանգամանքով, որ իրավական ակտի նախագիծը մշակող մարմինն է իրավասու և կոմպետենտ նախանշել մոտարկման ենթակա օրենսդրությունը՝ որպես համապատասխան ոլորտում գործունեություն և քաղաքականություն իրականացնող մարմին և, հետևաբար, տիրապետում է այդ ոլորտը կարգավորվող իրավական դաշտին: Այսինքն՝ համապատասխան մարմինը պատասխանատու է մոտարկման իրականացման, իսկ կենտրոնական մարմինը՝ ստուգման համար:

Վերոշարադրյալի համատեքստում և հաշվի առնելով ՀՀ իրավական համակարգում համանման կառուցակարգի առկայությունը՝ Եվրոպական Միության աջակցությամբ իրականացվող «Աջակցություն ՀՀ արդարադատության նախարարությանը՝ ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից (ՀԸԳՀ) բխող օրենսդրության մոտարկման գործընթացում» ծրագրի շրջանակներում Արդարադատության նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) դիտարկվել է որպես ՀԸԳՀ-ից բխող օրենսդրության մոտարկման համապատասխանության ստուգումն իրականացնող մարմին:

Նշված գործընթացն ապահովելու համար Նախագծով սահմանվել է օրենսդրության մոտարկման հասկացությունը, համաձայն որի՝ մոտարկման գործընթացը միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակում ներպետական օրենսդրության համապատասխանեցումն է առանձին ոլորտներում միջազգային պայմանագրով նախատեսված իրավական կարգավորումներին:

Մասնավորապես, Նախագծով ՀԸԳՀ-ի շրջանակներում մոտարկում իրականացնելու համար մոտարկումն իրականացնող իրավասու մարմինը, ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգավորումները համապատասխանեցնելու/ներդաշնակեցնելու նպատակով, մշակում է նոր նորմատիվ իրավական ակտի նախագիծ կամ գործող նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ նախատեսող նախագիծ: Մոտարկված նախագծին կից

ներկայացվող հիմնավորման մեջ առանձնացվում է առանձին բաժին՝ բացատրական նշումը վերնագրով, որում մանրամասն նշվում են այն իրավական նորմերը, որոնց համապատասխանեցվում է նախագիծը և դրա՝ ԵՄ օրենսդրությանը համապատասխանեցման կամ մասնակի համապատասխանեցման (ներառյալ՝ չհամապատասխանեցման) պատճառների վերաբերյալ պարզաբանում: Այսինքն, բոլոր այն դեպքերում, երբ մոտարկում իրականացնող մարմինը նախագիծը ԵՄ օրենսդրությանը համապատասխանեցնում է ոչ թե ամբողջապես, այլ միայն որոշակի մասով, բացատրական նշում բաժնում պետք է մանրամասն պարզաբանի մասնակի մոտարկման պատճառները:

Ուստի, մոտարկման ինստիտուտը հստակեցնելուց բացի, պետական-իրավական փորձաքննության շրջանակներում նախատեսվել է նաև ՀԸԳՀ-ի շրջանակներում սահմանված Եվրոպական միության օրենսդրությանը մոտարկման համապատասխանության որոշման կառուցակարգ, որի նպատակն է նորմատիվ իրավական ակտի նախագծի բազմակողմանի, լիարժեք և ամբողջական ստուգման ապահովումը: Մասնավորապես, նախագիծը մոտարկող մարմնի կողմից մշակվելուց հետո, նախագծի պետական-իրավական փորձաքննության փուլում ներկայացվելու է Արդարադատության նախարարություն (այսուհետ՝ ԱՆ), որտեղ նշված գործառույթը իրականացվելու է համապատասխան ոլորտում հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող մասնագետների կողմից: ԱՆ-ն հանդիսանալու է լրացուցիչ օղակ, որի կողմից տրամադրվելու է համապատասխան եզրակացություն մոտարկման համապատասխանության վերաբերյալ: Այսինքն, նշված փուլում մասնագետները պարզում են՝ արդյոք վերոնշյալ բացատրական նշումը պարունակում է օրենքով սահմանված ամբողջական տեղեկատվությունը, լիարժեք ներկայացված է ներպետական օրենսդրության համապատասխանեցման անհրաժեշտությունը, ինչպես նաև նշվածի շրջանակում պատշաճ իրականացվել է մոտարկման գործընթացը և, ըստ այդմ, տրամադրում է եզրակացություն: Նշված եզրակացությունը լինելու է համապատասխանության կամ մասնակի համապատասխանեցման (այդ թվում՝ մասնակի չհամապատասխանեցման) վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով առկա է համանման կառուցակարգ՝ պետական-իրավական փորձաքննության շրջանակներում, Նախագծով առաջարկվում է սույն լիազորությունը նույնպես վերապահել Արդարադատության նախարարությանը: Մասնավորապես, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի համաձայն իրականացվող պետական-իրավական փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) շրջանակներում կիրականացվի նաև ՀԸԳՀ-ի շրջանակներում ՀՀ օրենսդրությունը Եվրոպական միության օրենսդրությանը մոտարկման համապատասխանության որոշման գործընթացը, ինչը կապահովվի նշված գործընթացի իրականացումը շրջանառության փուլում՝ էապես կրճատելով, և' նախագծի շրջանառության փուլում գտնվելու ժամկետները, և' հատուկ մասնագիտական գիտելիքներով օժտված անձանց կողմից համապատասխանության որոշման արդյունավետ իրականացումը:

Ընդ որում, Նախագծով առաջարկվող կարգավորումների շրջանակներում ԱՆ ուղարկվում են ոչ բոլոր նորմատիվ իրավական ակտերը, ի տարբերություն պետական-իրավական փորձաքննության (բացառությամբ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված ստուգման և փորձաքննության ոչ ենթակա նորմատիվ իրավական ակտերի): Այսինքն, համապատասխանության որոշման ուղարկվելու են բացառապես այն իրավական ակտերը, որոնք մոտարկվում են ԵՄ համապատասխան օրենսդրությանը:

Համապատասխանության որոշման համար անհրաժեշտ են Նախագծով նշված ոլորտում հատուկ մասնագիտական գիտելիքներով օժտված անձինք, որոնք համապատասխան ոլորտում մասնագիտացած են լինելու, և որոնց կողմից ապահովվելու է ԵՄ օրենսդրությանը համապատասխանությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ ներկայումս գործող օրենսդրությամբ նախատեսված չէ նման գործընթացի իրականացում և որևէ մարմնի վերապահված չէ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ԵՄ օրենսդրությանը համապատասխանությունը որոշելու իրավասություն, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության՝ ՀԸԳՀ-ով սահմանված պարտավորությունները,

անհրաժեշտություն է առաջացել կատարել օրենսդրական փոփոխություններ ՀՀ օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը՝ *Եվրոպական միության Խորհրդի, Խորհրդարանի, Հանձնաժողովի կողմից ընդունված հրահանգներին (դիրեկտիվներին), կանոնակարգերին, պատվիրակված կանոնակարգերին, որոշումներին* (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 16.03.2018 թվականի թիվ ՍԴՈ-1407 որոշումը) մոտարկելու գործընթացի պատշաճ իրականացումն ապահովելու համար:

**2. Առաջարկվող կարգավորման բնույթը.**

Վերոգրյալի համատեքստում և հիմք ընդունելով օրենսդրության մոտարկման գործընթաց իրականացրած մի շարք երկրների փորձը Նախագծով առաջարկվում է՝

1. սահմանել օրենսդրության մոտարկման հասկացությունը,
2. պետական-իրավական փորձաքննության շրջանակում սահմանել ՀԸԳՀ-ով նախատեսված Եվրոպական միության օրենսդրությանը մոտարկման համապատասխանության որոշման հնարավորություն,
3. սահմանվել է մոտարկման շրջանակում ԱՆ ներկայացվող նախագծերի շրջանակը,
4. համապատասխանության որոշում իրականացնելու համար իրավասու մարմին դիտարկվել է Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալությունը,
5. սահմանվել են համապատասխանության որոշման նպատակով ԱՆ ներկայացվող նախագծերի հիմնավորման պարտադիր պահանջներ, ըստ որոնց այն պետք է պարունակի բացատրական նշում՝

ա. Եվրոպական միության մոտարկման ենթակա օրենսդրության մասին, որը ներառում է մոտարկման ենթակա իրավական ակտի վերնագիրը, համարը և ընդունման ամսաթիվը և.

բ. ներկայացված նախագծի՝ Եվրոպական միության օրենսդրությանը համապատասխանեցման կամ մասնակի համապատասխանեցման (ներառյալ՝ չհամապատասխանեցման) պատճառների վերաբերյալ:

**3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

Նախագիծը մշակվել է Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից:

**4. Ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է ապահովել ՀԸԳՀ-ի շրջանակներում նախատեսված Եվրոպական միության օրենսդրությանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը մոտարկելու գործընթացի իրականացումը, որը կնպաստի ներպետական օրենսդրության կատարելագործմանը և համապատասխան բնագավառների զարգացմանը:

**5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ**

Նախագծի ընդունումը չի բխում որևէ ռազմավարական փաստաթղթից: